ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 47-Ա

30 նոյեմբերի 2016թվական գ. Անուշավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 47-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի <<բ>> ենթակետի դրույթներով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի ղեկավարի 2017թվականի պաշտոնային դրույքաչափը սահմանել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ 30,2 տոկոսաչափով՝ 200 000 /երկու հարյուր հազար/ դրամ:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի ավագանու 2015թվականի դեկտեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավանի համայնքի ղեկավարի 2016թվականի վարձատրության չափը սահմանելու մասին» թիվ 47-Ա որոշումը:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Ձեռնպահ-0 Կողմ-7 Դեմ-0

Մ. Բայադյան կողմ ----------
Ա. Կարոյան կողմ ----------
Ռ. Հակոբյան կողմ ----------
Ռ. Հարությունյան կողմ ----------
Ա. Վարդանյան կողմ ----------
Գ. Վարդանյան կողմ ----------
Ա. Տեփանոսյան կողմ ----------

Անուշավան համայնքի ղեկավար՝ Ե. Հակոբյան

30 Նոյեմբերի 2016թվական
գ. Անուշավան